
«ԳԻԼԳԱՄԵՇԸ ԵՎ ԽՈՒԼՈՒՊՈՒ ԾԱՌԸ» ՎԻՊԵՐԳԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ-
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԸ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Միջագետքյան «Գիլգամեշ» դուցազնավեպի անբաժան մասն է կազմում «Գիլգամեշը և խուլուպու ծառը» շումերական վիպերգը: «Մաքուր Եփրատի» ասփին բուսած և նրա ջրերով սնված այդ ծառը արմատահան անելով, Բնաննա դիցուհին տարել էր ու տնկել Ուրուկում¹: Վիպերգի հետագա շարադրանքից պարզվում է, որ աճելով խուլուպուն վերածվել էր Կենաց ծառի, որի կատարին Անգուղ թռչունն իր ձագն էր բնավորել, ծառաբունը իր կացարանն էր դարձրել Լիլի (Լիլիթ) կույսը, իսկ արմատների մեջ բույն էր դրել օձը: Վախեցած Բնաննայի խնդրանքով, իր եղբայր Գիլգամեշը`

«Ջախջախեց օձին արմատների մեջ, օձին չոյուրվոյ,
Բռնեց Անգուղ-թռչնի ձագին
Եւ շպրտեց նրան լեռները:
Ավերեց Լիլիթի կացարանը,
Եւ կույսը փախավ անապատ:

Ծառը նա արմատահան արեց, ծառից գերան տաշեց:
Նրա քաղաքի մարդիկ, որ նրա հետ էին, կտրեցին ճյուղերը:
Եվ Լուսե Բնաննային մահիճի համար գերանը նա տվեց,
Նրա գահի համար մատուցեց:
Իսկ արմատների մնացորդներից իրեն քսկս շինեց,
Ճյուղերի մնացորդներից իրեն միկկու շինեց»²:

Վիպերգի այս հատվածում Գիլգամեշը օժտված է արևաբնույթ աստվածներին հատուկ գծերով: Պատահական չէ, որ նա համարվում է «Լուսե Բնաննայի» եղբայրը, գործում և հաղթում է արևածա գին: Ըստ շումերական ավանդագրույցների, Գիլգամեշը Ուրուկ քաղաքում արևի աստված Ուտուի Մեսկինգաշեր որդու հիմնադրած արքայատոհմից էր, որդին Լուգալբանդա արքայի և արևի աստծու

¹ S. N. Kramer. Gilgameš and the Huluppu-Tree.– Assyriological Studies, 11. Chicago, 1938, p. 74–76. Շումերական Բնաննա դիցուհու համարժեքներն են քաղական Բշտարը և հայկական Աստղիկը (Ս. Հ ա ղ ո թ յ ո Ւ ն յ ա ն. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 41–42): Իսկ Աստղիկ դիցուհուն ձուլված գետը Արածանին էր՝ Արևելյան Եփրատը, որտեղ գտնվում էր նրա լոգարանը (Գ. Ս ղ Վ ա ն ձ ա յ ա ն ց. Երկեր, հ. I, Երևան, 1978, էջ 71–72):

² Ст' у В. К. А ф а н а с ь е в а. Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве (այսուհետև՝ Гильгамеш и Энкиду). М., 1979, с. 85–86. Բնաննայի լուսե մակդիրը հիշեցնում է Աստղիկ դիցուհու խորհրդանիշ և անվանադիր Արուսյակ (Վեներա) մոլորակի որպես լուսաբացի աստղի կրած Լուսաբեր, Լուսասող, Լուսո աստղ անվանումները:

շառավիղ Նինսուն դիցուհու, երբ իրական Գիլգամեշը Ուրուկի I արքայատոհմի հինգերորդ արքան էր՝ ապրած մ. թ. ա. XXVII–XXVI դդ. սահմանագլխին³: Այս առթիվ պետք է հիշել, որ Գիլգամեշի մասին վիպերգի սյուժեն կազմող առասպելները շատ ավելի հին են, քան պատմական Գիլգամեշի ժամանակաշրջանը⁴:

Հայոց հնագույն առասպելաբանությանն ու իրականությանը Գիլգամեշի մասին այս վիպերգը առնչվում է խուլուպու ծառի միջոցով: Այս ծառի հետ ուղղակի կապ ունեցող անձնավորյալ էակը, ինչպես տեսանք, Լիլի // Լիլիթ կույսն էր: Շումերա-արքայական առասպելաբանության մեջ հիշատակվում են նման անուններ կրող երեք կերպարներ՝ տղամարդ-դև Լիլ-ն, կին-դև Լիլիթ-ն և արժատ Լիլ-ն, որի անունը հասկանում են որպես «Լիլիթ կույս», «լիլիական կույս», իսկ նրան ենթադրաբար համարում առաջին երկուսի դուստրը⁵: Բայց խուլուպու ծառի առնչությամբ հիշված Լիլիթը, կամ ավելի ճիշտ Լիլին, դև չէ: Ուշագրավ է, որ հրեական առասպելաբանության մեջ ևս Լիլիթ (Lilith) անունով իգական չար ոգի կա: Ընդ որում, երբեմն նրա անունը հիշատակվում է հոգնակի թվի արական սեռով⁶, որով բացահայտում է իր ուղղակի կապը ոչ թե Լիլի կույսի, այլ հիշյալ դևների հետ: Հրեական Լիլիթին Աստված արարել էր կավից այնպես, ինչպես արարել էր Ադամին, բայց նա թռել-հեռացել էր Ադամից: Ուրեմն, նա օժտված էր թևերով, որը անհարիր է կավից արարված էակին: Կասկած չի կարող, որ գործ ունենք նման անուններ կրող առասպելաբանական կերպարների համադրման և բաղադրկման հետ: Իսկ դա կարող էր տեղի ունեցած լինել հենց Միջագետքում:

Մեր կարծիքով, խուլուպու ծառում բնակվող Լիլի կույսը, որպես այդ ծառի տերևները շարժման մեջ դնող քամու թևավոր ոգի⁷, իր անվամբ և բնույթով հնդեվրոպական-հայկական ծագում ունի: Նրա հողմային էությունը հայտնի էր Գիլգամեշին, որը, ըստ դուրսագնավեպի արքայական գրառման, խուլուպուն արմատահան անելուց առաջ, մտածում էր այսպես. «Եթե ծառին արմատներուն մեջ ապրող և շարունակ արթուն օձուն գլուխը ջախջախեմ կամ ձգմեմ, ծառին գազաթը թառած Իմդուգուդ (Անգուդ – Ս. Պ.) թռչունը պիտի վախնա և, իր ձագերը առնելով, լեռները պիտի ապաստանի: Փոթորիկներու պատճառ եղող վիուկը (ընդգծումը մերն է – Ս. Պ.), որ այս ծառին խոռոչի մեջ կապրի, պիտի թողու իր որջը, և ես անոնց ամայի բույները պիտի ավերեմ»⁸: Լիլի կույսի անվան հիմքում

³ Գիլգամեշ. Հին Արևելքի դուրսագնավեպ (այսուհետև՝ Գիլգամեշ), թարգմանությունը և ներածականը Նշան Մարտիրոսյանի Երևան, 1963, էջ 9, В. К. Афанасьев. Гильгамеш. – Мифологический словарь. М., 1991, с. 154.

⁴ И. М. Дьяконов. Города-государства Шумера. – История древнего мира. Ранняя древность. М., 1989, с. 65.

⁵ Гильгамеш и Энкиду, с. 86, пр. 10.

⁶ А. А. Пазяна. Лилит. – Мифы народов мира, т. II. М., 1988, с. 55.

⁷ Ծառի և քամու առասպելաբանական փոխադրվածությունն իր արտացոլումն է գտել ի դեմս սօսի (<սօս-ի) և սօսափին (<սօս-ափ-ին) բառերի, իսկ դրանցը և ծառաբնակ թևավոր ոգունը՝ ի դեմս ճիւղ «ծառի ճյուղ, ոստ» (<ճիւ-ղ), ճիւ «թև», ճեւեղիկ «թիթեռ, ճիվաղ» (<*ճեւ-եղ-իկ), ճիւաղ «հրէջ» (<ճիւ-աղ) և ճեւակտուտ «քամու ինչ-որ տեսակ» բառերի: Ճեւ-ա-կտուտ բառի վերջին բաղադրիչը կտուտ բառն է, որից՝ կտուտել «չարչարել, տանջել, խոցել» բայը:

⁸ «Գիլգամեշ», էջ 108:

մենք տեսնում ենք *h.-է. *lel-ʌl-* «շարժել, ցնցել» արմատը, որի առաջին տարբերակից հայերենում ունենք լել, իսկ երկրորդից՝ *լիլ (որից՝ *լիլ-ուկ>լուկ): Գրաբարում արմատն ավանդված է երկրորդական նշանակությամբ՝ լուկ «նեղութուն, չարչարանք», որից՝ լկել «չարչարել, նեղել», լկիչ «չարչարող» և այլն, բայց մեր բարբառները պահել են արմատի նախնական նշանակությունը: Հմմտ. լելալ «շարժվել, երերալ», լկալ, լկվիլ «շարժվել, երերալ, այս ու այն կողմ ընկնել» (Վան), լկել «ցնցել, թափահարել» (Ալաշկերտ), լկել «մանկան օրորել», «քնած մարդուն ցնցել ու շարժել՝ որպեսզի արթնանա» (Մուշ), լկիլ (Խարբերդ), լիլիկել «օրորել մանկան օրրանում» (Մարաղա) և այլն, իսկ ազգակից լեզուների արմատակից բառերից՝ հին հնդկ. *lēlayati* «ձոձվել, տատանվել, դողալ», *lālayati* «զզվել, փայփայել», լիտվ. *leliūoti* «օրորել, ձոձել», լատիշ. *leluōt* «օրորոցի մեջ մանկան օրորել, նանիկ ասել», ռուս. *лелеять* «զզվել, փայփայել», բուլղ. *leleǎka* «օրորոց», հին լեհ. *lelejanie* «ծովի ծփանք» և այլն⁹:

Հավանաբար, հնդեվրոպական նույն արմատն է պարունակում, հնում անտարակույս ծիսական, «Լիլի» հայ ժողովրդական (Մասուն - Տարոն) պարերգը՝ աջ ու ձախ ձոձումով պարային շարժումով: Նույն արմատն ենք մենք տեսնում նաև հայերեն լելիք «չղջիկ» և լելակ // լելակ «բազեի նման մի թռչուն»¹⁰ բառերի հիմքում. այդպես կարող էին կոչված լինել Լիլի կույսի սրբազան էակները (չղջիկը՝ գիշերային, իսկ բազեն՝ ցերեկային) համարվելու պատճառով: Լիլի կույսի անունից կարելի է բխեցնել նաև հետևյալ իզական անձնանունները. Լելո, Լելի, Լելի, Լիլիփար, որոնցից առաջինին Հ. Աճառյանը հարցականով վերագրում է վրացական ծագում, երկրորդը և երրորդը բխեցնում է արաբա-պարսկական Լել-լա // Լելլի անձնանունից, իսկ չորրորդի հիմքում տեսնում է պարսկերեն *nīlūfar* «նունուֆար» ծաղկի անունը¹¹: Բացառված չէ, որ Լիլիփար <*լիլի-փար անձնանվան առաջին բաղադրիչն արտահայտի կույս - ոգու բուն անունը, երկրորդն էլ արտացոլումը լինի վերջինիս առասպելաբանական էության, այսինքն՝ ներկայացնի բարբառային (պարսկերենից փոխառյալ) փարի // փերի բառի կրճատ ձևը:

Միջազգետքում խուլուպուն տեղական ծառ չէր, այն նախապես աճում էր «Մաքուր Եփրատի» ափին և սնվում նրա ջրերով: «Մաքուր Եփրատը» վերաբերում է Հայկական լեռնաշխարհին՝ նրա այն մասին, որտեղ է գտնվում գետի վերին հոսանքը (Միջազգետքում Եփրատի ջրերը պղտոր են): «Մաքուր Եփրատը» կարող էր լինել Արևելյան Եփրատը, որի հին հայկական Արածանի (սեպագր. *Arşania, Arzania*) անունը «փայլուն, պայծառ» է նշանակում (Արածանի<*արածանի, որտեղ *արած <*h.-է. *arəg' // *arg'-*>արծ-արթ)¹²: Եփրատի ափին աճած հայ-

⁹ Հ. Աճառյան և Ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. II, Երևան, 1973, էջ 288, Մ տ. Մ ա լ ի ս ա յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. II, Երևան, 1944, էջ 192, 198:

¹⁰ ՀԱԲ, հ. II, էջ 273, ՀԲԲ, հ. II, էջ 192:

¹¹ Հ. Աճառյան և Ն. Հայոց անձնանունների բառարան, հ. II, Երևան, 1944, էջ 408, 427, 429:

¹² Մ. Պետրոսյան և Ն. Երկգույն-երկհարկ տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը Հայկական լեռնաշխարհում. - ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների»,

կական ծառի հսկարքս անունը թարգմանում են «ուռի»¹³ կամ «կաղնի», չնայած ենթադրում են նաև, որ այն կարող է նշանակել շինափայտ տվող ծառի տեսակ՝ առանց մասնավորեցման¹⁴: Հայկական տվյալները հնարավորություն են տալիս բացահայտելու այս ծառի տեսակը և Բնաննայի մահճակալի ու գահի համար հենց այս ծառատեսակը (և ոչ թե, ասենք, Միջագետքի բնակչության սրբազան ծառը՝ արմավենին) ընտրելու դրդապատճառը:

Իսկ սրբաբաղադրիչների տրոհվող բառի երկրորդ՝ -սրբա, բաղադրիչը, մեր կարծիքով, նույնական է ուփի (<*ուփ-ի) ծառանվան *ուփ- արմատի հետ (ի-ն բուսանուններ կերտող հայտնի վերջածանց է. հմմտ. այգ-ի, կաղն-ի, ծիրան-ի և այլն)¹⁵: Նույն արմատի նախաձայն հ-ով տարբերակից են սերում բարբառային հու՛վուտ «սուսների բազմություն» (Արցախ), հուփփի, հուպպի «բարդի, կաղամախի, populus» (Մեղրի և Կարճնան) բառերը, իսկ առանց այդ նախաձայնի՝ վրացերեն՝ հայերենից փոխառյալ օփի բառը, «որ է բարտի կամ կաղամախի»¹⁶: Նոր հայկազյան բառարանի հեղինակները գրում են. ուփի՝ «անուն անպտուղ ծառոյ ի պէտս փայտի շինուածոյ. թերեւս որպէս ազգ կաղամախի»¹⁷, սօսի՝ «ազգ բարտի ծառոյ, որ եւ կաղամախի սպիտակ»¹⁸: Ուրեմն, ժողովրդական լեզվում ուփի-ն և սօսի-ն ոչ միայն միևնույն ծառն են նշել, այլև բարդին, կաղամախին և, ըստ երևույթին, նույնատեսակ մյուս ծառերը: Այս դեպքում, ուփի-ի նախնական նշանակությունը լինելու էր այդպիսի ծառերի երկնասլաց բոլոր տեսակները: Դրանք խոր հնադարից պաշտամունքի առարկա են եղել և մեր բնապաշտ նախնիների շնորհիվ իրենց անվանական արտացոլումը գտել Հայկական լեռնաշխարհի ու Կիլիկիայի հարակից շրջանի տեղանուններում:

Հայտնի է, որ հնագույն Միջագետքը շինարարական փայտանյութ ներմուծում էր Հայկական և Կիլիկյան Տավրոս լեռնաշղթաներից՝ Տիգրիս ու Եփրատ գետերի միջոցով: Այս լեռնաշղթաներում սեպագիր արձանագրությունները հիշատակում են Սր- բաղադրիչը պարունակող այնպիսի տեղանուններ, ինչպիսիք են Սրսու-ն (Uppummu) և Սրարա- ն: Սրսու կոչվում էր Շուրբիա (հետագա Աղձնիքը). երկրի մայրաքաղաքը, որը տեղադրվում է Սասնա լեռներում¹⁹: Սրսու անվան մեջ առկա են սր -//* ուփ արմատը և -um- վերջածանցը: Վերջինս առկա է

1991, № 2, էջ 129-130, ն ու յ ի ՝ Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 3, էջ 82, ծան. 46:

¹³ S. N. K r a m e r. Նշվ. աշխ., էջ 74-75:

¹⁴ Гильгамеш и Энкиду, с. 88. Հարավային Միջագետքի բնակչությունը ծանոթ էր միայն իր երկրում աճող բարձրահասակ մի ծառատեսակի՝ արմավենուն: Բայց թանկարժեք այդ ծառատեսակը որպես շինանյութ չէր գործածվում (В. В. С т р у в е. История древнего Востока. Л., 1941, с. 65), իսկ նրա փյունիկյան արմավենի տեսակը սրբազան էր համարվում և նախատիպ էր Միջագետքի բնակչության Կենաց ծառի (В. И. А в д и е в. История древнего Востока. М., 1953, с. 47):

¹⁵ ՀԱԲ, հ. I, Երևան, 1971, էջ 166:

¹⁶ ՀԱԲ, հ. III, Երևան, 1977, էջ 619-620:

¹⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Երևան, 1981, էջ 561:

¹⁸ Նույն տեղում, էջ 768:

¹⁹ Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 208-209; Д. Н. С а р к и с я н. Страна Шубрия. Ереван, 1989, с. 23.

նան Թիզլաթփալասար I-ի կողմից մ. թ. ա. 1114 թ. Նաիրի երկրում հիշատակած urumi/urume (<*ur-um// ուռ-ի) ծառատեսակի²⁰ անվան մեջ (հմմտ. նան դդում, ծծում-բ, կնգում և այլ բառերում առկա -ում անվանակերտ վերջածանցը): Սարգա լեռը գտնվում էր Կիլիկյան Տավրոսի արևելյան մասում՝ Կիցուվ ասոնայի (հետագա Կիլիկիան) և Խեթերի երկրի սահմանային գոտում²¹: Լեռնանունը բաղկացած է ur-/* ուի- և -arpa/* արփ- բաղադրիչներից: Սրանցից առաջինը ծառատեսակի անունն է, իսկ երկրորդը նույնական է հայերեն արփ բառի հետ: Արփ նշանակում է «եթեր», իսկ ածանցյալ արփի ձևով՝ «երկնային գոտի, լուսեղեն գոտի», «լուսեղեն տարածություն, լույս», «արեգակը իբրև լույսի աղբյուր»²²: Սարգա-ի այսպիսի ստուգաբանությունը հիշեցնում է ուփիի տեսակներից մեկի սպիտակ կաղամախի (populus alba) անունը: Կաղամախին «բարձր ծառերի ցեղ է, որ շատ տեսակներ ունի, ինչպես բարտի, սոսի, հագնի, այծառ և այլն»²³ և կոչվում է նաև դողդոջուն բարդի (Populus tremula)²⁴:

* Ուփ բաղադրիչը պարունակող տեղանվանական տվյալներից հասուն կ ուշադրության են արժանի Մեծուփ-ը և Օծուփ-ը, որովհետև դրանք նաև վանքերի անուններ էին: Հ. Աճառյանը սրանց -ուփ բաղադրիչները նույնացնում է ուփ «փոսկամ խոռոչ, որի մեջ ջուր է հավաքվում» բառի հետ և Մեծուփ-ը ստուգաբանում որպես «մի մեծ փոս կամ խոռոչ, որի մեջ ջուր է հավաքվել», իսկ Օծուփ-ը (<*Օձ-ուփ)՝ «լճակ, որի մեջ օձ է բնակվել»²⁵: Կարծում ենք, որ հիշյալ անունները կրած բնակավայրերի և վանքերի մեջ կամ դրանց մոտ եղել են սրբազան ուփի // սոսի-ներ, ուստի այդ պատճառով էլ դրանք կոչվել են Մեծուփ («մեծ ուփի, մեծ սոսի») և Օծուփ («օձյա լ ուփի»): հմմտ. օձ «քսելու յուղ», որից՝ օձել: Տեսանք, որ Արցախի՝ հնաբանություններով հայտնի բարբառում հու փուտ, այսինքն՝ ուփուտ, նշանակում է «սոսիների բազմություն, սոսուտ»: Սոսին՝ հայկական ամենաբարձր և երկարակյաց ծառերից մեկը (մինչև 2000 և ավելի տարիներ ապրող), օգտագործվում էր պաշտամունքային շինությունների՝ եկեղեցիների ու վանքերի, ինչպես նաև ջրաղացների բակերի կանաչապատման համար²⁶: Նրա անունը փոխաբերաբար գործածվում էր «հպարտ, պերճ, սեզ» նշանակություններով և բոլոր ժամանակներում այն եղել է հայության ամենապաշտելի ծառը²⁷:

Հին Հայաստանում սոսիների պաշտամունքի հնության և կարևորության մասին խոսում է այն հանգամանքը, որ սոսիների սրբազան գլխավոր պուրակի

²⁰ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Երևան, 1981, էջ 19, Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 39.

²¹ В. Н. Х а ч а т р я н. Восточные провинции Хеттской империи. Ереван, 1971, с. 92.

²² ՀԱԲ, հ. I, էջ 345, ՀԲԲ, հ. I, Երևան, 1944, էջ 286-287:

²³ ՀԲԲ, հ. II, էջ 370:

²⁴ Մ. Գ Ր Ի Գ Ն Ր Յ Ա Ն. Կաղամախի.- Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. V, Երևան, 1979, էջ 194: Կաղամախին կոչվում էր նաև կարբ, որից ունենք Կարբն, Կարբի, Կարբինք, Շիկակարբն և Ուռակարբն գյուղանունները:

²⁵ ՀԱԲ, հ. IV, Երևան, 1979, էջ 659: Նույնպիսի ստուգաբանություն Մեծուփ վանքի անվանը ավելի վաղ տվել էր Գ. Սրվանձտյանցը (տե՛ս Գ. Ս Ր Վ Ա Ն Ը Տ Յ Ա Ն Գ. նշվ. աշխ., էջ 581):

²⁶ Մ. Բ ա Ր Ա Ե Ղ Յ Ա Ն. Սոսի.- ՀՍՀ, հ. 10, Երևան, 1984, էջ 510:

²⁷ Մ. Հ ա Ր Ն Ի Թ Յ Ն Ի Յ Ա Ն. նշվ. աշխ., էջ 9:

հիմնադիրը համարվում էր Հայկ նահապետի ավագ որդի Արամանյակը²⁸ և գտնվում էր մայրաքաղաք Արմավիրում: Ինչպես հետագա դարերի քրիստոնյա հայերը մանուկներ էին ձնում սրբերին (և յոթ տարի նրանց մազերը չէին խուզում), այնպես էլ մեր բնապաշտ նախնիները այս սրբազան պուրակին էին մանուկներ ձնում: Մովսես Խորենացին Մար Աբաս Կատինայի մատյանից քաղում է հետևյալ տեղեկությունը. «Արայանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմին, թողլով արու գաւակ ամենահարուստ եւ շատահանձար յիր եւ ի բան՝ զԱնուշաւանն Սօսանուէր: Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամենակայ որ յԱրմաւիր. գորոց զսաղարթուցն սօսաւին, ըստ հանդարտ եւ կամ սաստիկ շնչելոյ օդոյն, եւ թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց, եւ այս ցրագում ժամանակս»²⁹: Մովսես Խորենացուց մեջբերված այս հատվածի տեսանկյունից ուշագրավ են նաև սօս // սօսի անունից կազմված մյուս անձնանունները: Սօս և Սօսի տեսքով ունենք արական անձնանուններ, իսկ Սօսէ և Սօսուն տեսքով՝ իգական անձնանուններ³⁰: Սօսուն-ը Ղրիմի և Նոր Նախիջևանի հայոց բարբառում նաև «գեղեցիկ» է նշանակում³¹ ու կազմությամբ նման է Նախշուն, Սրբուն, Տիրուն և իգական այլ անձնանուններին: Սօսի ծառը նշող բարբառային (պարսկերենից փոխառյալ) չինար բառը ևս կիրառվել է որպես իգական անձնանուն:

Բարձրահասակ, հաստաբուն ծառի և Մայր դիցուհու առասպելաբանական նույնացման տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Նոր Նախիջևանում պահպանված և հնագույն մի ձեսի վերապրուկ հանդիսացող հետևյալ երգասացությունը.

«Մեծ մամային առին, ծառին կապեցին,
 Լանքը, բոյր վերշոկ-վերշոկ չափեցին:
 Ասկից ունիս, անկից ունիս, մեծ մամա.
 Օխա ու կես խուռմա ունիս, մեծ մամա.
 Կանգունուկես մեջքիդ* լանքն է, մեծ մամա,

 Տեսքով-շենքով անթիկա ես, մեծ մամա,
 Տեսք էրեսով լուսինկա ես, մեծ մամա,
 Տղաներուն * խելքին բալիքն ես, մեծ մամա,
 Կտրիճներուն խելքերեն կհանիս, մեծ մամա,
 Ծերերուն շողունքը կըվազցունուս, մեծ մամա,

 Մեծ մամային առին, ծառեն քակեցին,
 Ծեր ու յաշ, սուտյա թախըմ իսաղացին,
 Առոք-փառոք դեպի տունը ճամբեցին,

²⁸ Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց (այսուհետև՝ Խ ո ռ է ն ա գ ի), Երևան, 1981, Ա. Ե, Թ, Ժ-ԺԲ:
²⁹ Նույն տեղում, Ա. Բ:
³⁰ Հ. Ա ճ ա յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. IV, Երևան, 1948, էջ 683:
³¹ Նույն տեղում:

Դուռին առջևը նորեն կենե խաղացին:
Ա՛յ մեծ մամա, մեծ մամա, մեծ մամա,
Առանց քեզի մեկ հատ գործ չի լրմանա»³²:

Այստեղ բացատրության կարիք ունի միայն «սուտյա թախրմ»-ը, այսինքն՝ ծե- սին մասնակից «դատավորների» խումբը (ռուս. սուդյա «դատավոր»), որը, բնա- կանաբար, ծեսում ստանձնած էր լինելու հին քրմերի դերը (հեթանոս քրմերը նաև դատավորներ էին):

Մայր դիցուհու և ծառի առասպելաբանական նույնացման մասին է խոսում հայերեն մայր «մայրիկ» բառի և մայր բուսանվան ծագումնաբանական կապը՝ երկունս էլ սերած հնդեվրոպական նախալեզվի մերձավոր ձևերից³³: Բարձրա- հասակ ծառեր նշած մայր բառից էլ բուսանուններ կերտող ՚ի վերջածանցի մի- ջոցով կազմված է մայրի «անտառ» բառը (բարբառներում՝ մերի, մարի)³⁴: Հայե- րենում արձանագրված «ծառ» > «անտառ» իմաստային անցումը միջանկյալ օ- ղակն է ներկայացնում «ծառ» > «անտառ» > «փայտե շինանյութ» իմաստային անց- ման, որի վերջին օղակն արձանագրել է լատիներեն materia բառը: Հմմտ. māter «մայր» և materia «գերան, փայտանյութ, շինանյութ, նյութ» և այլն³⁵: Որպես ծառի անուն այս բառի տեղանվանական կիրառության տեսանկյունից ուշագրավ է նրա հնդեվրոպական նախաձևին մոտ մի տեղանվան գոյությունը: Ասորեստա- նի Աշուրնասիրապալ II թագավորը (մ. թ. ա. 883–859 թթ.) Նաիրի երկրում, Արևմտյան Տիգրիսի աջափնյակում, ներկայիս Մարդին քաղաքից հյուսիս հիշա- տակում է Matara անունով մի քաղաք, որը նույնացնում են հետագա Mathra-ի հետ³⁶: Իսկ այդ նույն շրջանում, ներկայիս Դիարբեքրից հարավ-արևելք, գտնվում է այժմ Զինար կոչվող բնակավայրը, որի անունը «սուսի» է նշանակում:

Գիլգամեշը խուլուպու ծառը կտրել էր Ինաննա դիցուհու համար մահճակալ ու գահ պատրաստելու նպատակով: Այդ ծառի հայրենիքում՝ Հայկական լեռնաշ- խարհում, դեռևս հայասական դարաշրջանում շումերական Ինաննան (աքադա- կան Բշտարը) նույնացված էր հայոց Մայր դիցուհու հետ: Խեթական թագավոր Սուպիլիում I-ի (մ. թ. ա. 1380–1346 թթ.) և Հայաստալի ցեղապետ-արքա Խու- կանայի միջև կնքված պայմանագրում հայոց Մայր դիցուհին հանդես է գալիս ԴINANNA գաղափարագրի տակ³⁷: Եթե Գիլգամեշը Ինաննայի մահճակալի ու

³² Տպագիր տեքստում մեջքիդ բառի փոխարեն մեջիքդ է, իսկ տղաներուն բառի փոխարեն՝ աղաներուն: Եթե ծառին կապած «մեծ մամայի» մարմնակազմը բնութագրվում է այնպիսի բառակապակցությունների միջոցով, ինչպիսիք են «օխա ու կես խուռմա»-ն, «բաղ ու բաղջա»-ն, «դրախտի ճամբա»-ն (տե՛ս Խ. Փոքր ջեյա ն. Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1965, էջ 87), ապա հասկանալի է, որ Կենաց ծառի հետ նույնացված «մեծ մաման» (Մայր դիցուհուն փոխարինող խամաճիկը) ըմբռնվել է որպես տիեզերքի մոդել:

³³ ՀԱԲ, հ. III, էջ 247–248, ՀԲԲ, հ. III, Երևան, 1944, էջ 248–249:

³⁴ Հմմտ. Երվանդ Վերջինը «Տնկէ եւ մայրի մեծ» // «զանտառն, որ կոչի Ծննդոց» (Խո- բե ն ա գ ի, Բ. ԽԱ):

³⁵ ՀԱԲ, հ. III, էջ 247, И. X. Д в о р е ц к и й. Латинско-русский словарь. М., 1976, с. 621.

³⁶ Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту, с. 137.

³⁷ Keilschrifturkunden aus Boghazköi (այսուհետև՝ KUB), Hf. 1–30. Berlin, 1923–1939, XXVI, 39, IV, 26.

գահի համար շինանյութ էր դարձնում հայկական անտառներից տարված ծառը, ապա նա այդպես վարվում էր որոշակի նկատառումով: Նրանից պատրաստված գահին բազմած կամ մահճակալում պատկած շումերական Բնաննան յուրացնելու էր (ըստ երևույթին, ծառի բնափայտի միջոցով) այդ ծառի հետ նույնացված, ծառերի և առհասարակ անտառների հովանավոր հայոց Մայր դիցուհու հատկանիշները³⁸ (հմմտ. «մեծ մամայի» կերպարը և մայր «մայրիկ» ու մայրի «անտառ» բառերի ծագումնաբանական կապը):

Բնաննան իզուր չէր վտարել տվել Լիլի կույսին: Նա յուրացնելու էր նաև խուլուպու // սոսիին առնչվող Լիլիի գործառույթը: Իսկ դա կարող էր լինել քամու հարուցած սոսափյունի միջոցով գուշակելու կարողությունը: Հավանաբար, դա սոսիին առնչվող գուշակության միակ ձևը չի եղել: Կարծում ենք, որ հայոց քրմերն ու քրմուհիները գուշակել են նաև ծառից պոկված տերևի միջոցով: Սոսին ունի «ձեռնաձև» // «թաթաձև» տերևներ³⁹, իսկ ձեռքի ափի գննումով գուշակումը պահպանվում է անգամ մեր ժամանակներում (հմմտ. ձեռնահմայ // ձեռնահմայ և ձեռնահմայություն): Գուշակության ծառ սոսի /ոսի/ հսկարը-ն իր անունը կարող էր ստացած լինել հենց «ձեռն ավել/թաթաձև տերևներ ունենալու պատճառով: Ոսի և հսկար բառերի * ոսի և *-սքք- բաղադրիչները նախապես «ձեռք, ձեռքի ափ» կարող էին նշանակել, մանավանդ, որ ծառի տեսակ նշող ոսի // հուսի և ձեռք նշող *ուսի // *ուս և ձեռքը միևնույն արմատի հնչյունական տարբերակներն են⁴⁰: Սրանցից * ուսի-ը առկա է ինչպես հավաստի ստուգաբանություն չունեցող կոուսի «բռունցք» բառում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհում խեթական արձանագրությունների հիշատակած Kurupija տեղանվան⁴¹ մեջ: Վերջինիս -ija բաղադրիչը տեղանվանակերտ վերջածանց է՝ նույնական խեթերենի -ija ածականակերտ վերջածանցի⁴² հետ: Հայերեն -ի վերջածանցի նման⁴³

³⁸ Շումերական Բնաննան Մայր դիցուհի չէր: Խուլուպու ծառը խորհրդանշում է նրա պաշտամունքում (պատմական Գիլգամեշի կողմից) իրագործված այնպիսի մի փոփոխություն, որի նպատակը նրան Մայր դիցուհու հատկանիշներով օժտելն էր: Բացառված չէ, որ այդ երևույթը կապված էր հարավային Միջագետքում անտառակների ստեղծման հետ: Դրանք սրբազան արգելանդներ էին լինելու ձևով Բնաննա դիցուհուն և գտնված նրա աստվածային հովանու տակ:

³⁹ ՀԲԲ, հ. IV, Երևան, 1945, էջ 285, Մ. Բ ա ռ ա ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 510:

⁴⁰ Հայերենում պետք է առանձնացնել նույնահունչ երեք արմատներ. հուս «մոտ, մերձ» (<հ.-ե. *sub-), հուս «սեղմում, սեղմել» (<*ub-) և * հուս «ձեռքի թաթ»: Դրանցից վերջինը նախորդների իմաստային ազդեցությանը ենթարկվելով հանդերձ, առանձին դեպքերում բացահայտում է իր նախնական «ձեռքի թաթ» նշանակությունը. հմմտ. հուս լինել «մոտ գնալ, մոտենալ», բայց նաև «դիպչել, ձեռք տալ», հպել «հուս լինել, հուս գնալ», բայց նաև «դիպչել, ձեռք տալ», հպելութիւն «շոշափելը, շոշոփման գգայարան, շոշափելիք» (ՀԲԲ, հ. III, էջ 138, 140):

⁴¹ KUB, XXIII, 11, II, 17. Ի նկատի առնելով խեթերենի յուրահատկությունը՝ խուլ և ձայնեղ հնչյունների (այս դեպքում՝ k/g) միատեսակ արտացոլումը, տեղանունը կարելի է կարդալ նաև Gurupija ձևով:

⁴² В. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 67, ծան. 167, էջ 107, ծան. 255:

⁴³ Ուրարտական դարաշրջանում տեղանվանակերտ -ի վերջածանցը իր հնդեվրոպական նախատիպին ավելի մոտ հնչում ուներ. հմմտ. Anzalia, Luqia, Uškia և այլն [Տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊԼԺ), Երևան, 1987, էջ 231, ն ու յ ն ի՝ Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, я.с.я244;я У.

-ափ- բաղադրիչը հենց «ձեռքի ափ» է նշանակում (-ին վերջածանցի համար հմմտ. բառաչ-ին, գոչ-ին, հնչ-ին, վրնջ-ին և այլն):

Ինչպես տեսանք, խուլուպուի հատված ճյուղերից ու արմատներից Գիլգամեշը իր համար mikku և pukku էր սարքել: Մի ժամանակ կարծում էին, թե դրանք մոզական ուժով օժտված զենք ու զրահ են: Ն. Մարտիրոսյանի արևմտահայերեն թարգմանության մեջ դրանք հենց այդպես էլ ներկայացված են՝ «կախարդական զենք ու զրահ»: Բայց դրանց վերագրվել է անգամ անդրշիրիական աշխարհում գտնվողներին կանչելու գործընթաց: Դրանց միջոցով էր Գիլգամեշն այնտեղից դուրս բերելու մեռած ընկերոջը՝ Էնկիդուին: Արարողակարգի համաձայն, ամեն ինչ արվելու էր գիշերային բացարձակ լռության մեջ: Բայց ցայգալույսին քնից սարսափահար արթնացած մի երեխայի ճիչը խախտել էր ծիսակարգը, և Գիլգամեշի mikku- և ու pukku-ն ընկել էին դեպի դժոխք տանող վիհը: Մ. Սմիթը ցույց է տվել, որ դրանք փողային երաժշտական գործիքներ էին լինելու⁴⁹: Մ. Ն. Կրամերը դրանք թմբուկ ու նրա փայտիկներն է համարում⁵⁰: Այդ կարծիքը պաշտպանում է Վ. Կ. Աֆանասևան⁵¹: Ուշադրություն դարձնենք, որ տեքստում խոսքը խուլուպու ծառի միայն ճյուղերից ու արմատներից պատրաստված երաժշտական գործիքների մասին է: Հայերենն ու հայկական նյութը ցույց են տալիս այդ գործիքների անունների հայկական ծագումը և ապացուցում Մ. Սմիթի իրավացիությունը:

Սկսենք mikku-ից: Մրա հիմքում, մեր կարծիքով, հայերեն (բայց առանձին չպահպանված) *միկ արմատն է: Այն առկա է միջնադարյան «Բառգիրք հայոցի» «Մկան – ձայնական գործի»⁵² բառում. մկան<*միկ-ան (հմմտ. կո-ան, փակ-ան, խթ-ան, պատ-ան և այլն)⁵³: Նրա նախնական «ճյուղ» նշանակությունն է հուշում մկայ աշտարակ բառակապակցությունը (մկայ՝ սեռ. հոլով<*միկ՝ ուղղ. հոլով): Այսպես է կոչվում «չոր ճյուղերի դեզը, որ տանիքում դարսում են լող-քարի վրա և Տերնտասի երեկոյին վառում են»⁵⁴: Քանի որ «աշտարակ»-ն այստեղ «դեզ» է նշանակում, ուստի մկայ<* միկ նշանակելու է «չոր ճյուղ»: Այս նույն արմատը պահպանած բառերից երրորդը մկունդ-ն է. մկունդ <* միկ-ունդ, որտեղ -ունդ վերջածանց է. հմմտ. ել-ունդ, ծն-ունդ, սեր-ունդ, սն-ունդ և այլն⁵⁵: Մկունդ նշանակում է «մեծ գեղարդ, տեգ, տեգի կոթ», «նիզակի բուն, մական»⁵⁶: Իսկ այդ առարկաների նախնական օրինակները պարզապես ծառի ճյուղ, փայտե ձող էին ներկայացնում: Հայտնի է, որ «նիզակի ամենահին ձևը ... եղել է 2–3 մետր երկարությամբ փայտե ձողը, որի ծայրը սրվել է կրակի վրա այրելով»⁵⁷: Ծառի ճյուղից

⁴⁹ S. Smith. B/pukk/qqu and mekku.– Revue d'assyriologie et d'archéologie orientale, XXX. Paris, 1933, № 4, p. 153–154.

⁵⁰ S. N. Kramer. Sumerian Mythology. New York, 1961, p. 34.

⁵¹ «Тильгамеш и Энкиду», с. 137–138.

⁵² Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամայանի, Երևան, 1975, էջ 218:

⁵³ Հայոց լեզվի պատմական քերականություն, II, Երևան, 1975, էջ 93:

⁵⁴ ՀԲԸ, հ. III, էջ 343:

⁵⁵ ՀԼՊՆԺ, էջ 240:

⁵⁶ ՀԲԸ, հ. III, էջ 344:

⁵⁷ Խ. Ս ա մ ւ ե լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Երևան, 1941, էջ 64:

փողային երաժշտական գործիք պատրաստելու միջոցը մարդուն հայտնի էր նախնադարյան հեռավոր ժամանակներից սկսած: Այդպիսի գործիքի առաջին պարզունակ տեսակներից է շվին: Շուի «սուլիչ» բառի ծագման առիթով Հ. Աճառյանը գրում է. «Արդյոք բնաձայն բառ է կամ գուցե շի «ծիլ» բառից»⁵⁸: Ճիշտը երկրորդ կարծիքն է լինելու, որովհետև շուի, շվի < * շի-ի, իսկ շի արմատը նշանակում է նաև «մատղաշ, դալար, նոր դուրս տված ճյուղ», «մատաղատի ծառ կամ թարմ ոստ»⁵⁹: Դրա մասին են խոսում նաև շուառն < * շի-առ-ն և նրա տարբերակ * շուառն < * շու-առ-ն բառերը, որոնք նշանակում են նաև «ցորենի ձողտը», «մի տեսակ եղեգ», «սլաք, նետ, տեգ», բայց նաև «երաժշտական փող»⁶⁰: * Միկ արմատական բառի մասին և նրա շուրջ ասվածները խոսում են շումերական mikku փողային գործիքի անվան հայկական, ամենայն հավանականությամբ, հնդեվրոպական-հայկական ծագման մասին:

Կարծում ենք, որ նույնպիսի ծագում է ունենալու mikku- ի նման և նրա հետ միասին հսլարս ծառի փայտանյութից պատրաստված փողային մյուս գործիքի pukku // bukku (puqqu, buqqu)⁶¹ անունը: Եթե փողային գործիքները պատրաստում էին ծառի ճյուղից, բնականաբար, դրանց անվանումները նախապես «ճյուղ» կամ դրան հանգող իմաստներ էին ունենալու: Ըստ այսմ, pukku // bukku փողային գործիքի անվան այդիմաստ բազմաթիվ զուգահեռների կարելի է հանդիպել հնդեվրոպական լեզուներում, մանավանդ հայերենի տարբեր բարբառներում: Կարծում ենք, որ հնդեվրոպական նախալեզվի միևնույն արմատից են սերում հունարեն βυκάνη, լատիներեն būcina «եղջերափող, շեփոք»⁶² և, ըստ ամենայնի, հայերեն պուկ (հ.-ե. * b -> հայ. պ) «պատերազմական փող» բառերը: Հ. Աճառյանը սրանց նմանությունը պատահական, իսկ մեր բառը փոխառյալ է համարում արաբերեն կամ պարսկերեն būq «եղջերափող, շեփոք» բառից⁶³: Բայց մեր բառը արաբերենից կամ պարսկերենից փոխառյալ լինել չի կարող, որովհետև ավելի նախնական-ընդհանրական իմաստ և բարբառներում բազմաթիվ ածանցյալ նշանակություններ ունի, քան արաբերեն և պարսկերեն այդ բառերը: Պուկ // պուկ արմատական ձևով այն նշանակում է նաև «երգեհոնի եղեգնափող», «զուռնայի փող» (Գանձակ), «ուռիե սուլիչ» (Ակն, Սեբաստիա Բինկյան), պկու տեսքով՝ «մի տեսակ սրինգ» (Լոռի, Տավուշ, Արցախ, Թիֆլիս)⁶⁴: Պկու < * պուկ-ու, իսկ վերջաձևանցի համար հմմտ. ած-ու, եղջեր-ու, խաշ-ու, խորով-ու և այլն⁶⁵:

Պուկ արմատը իր նախնական նշանակությամբ առկա է մանկական թոթովանքի պուպուխ «ծառի ճյուղ»⁶⁶ և պկկուն տալ «ծլել»⁶⁷ բառերում: Պուպուխ < *

⁵⁸ ՀԱԲ, հ. III, էջ 533:

⁵⁹ Նույն տեղում, հ. III, էջ 521:

⁶⁰ Նույն տեղում, հ. III, էջ 505:

⁶¹ S. S m i t h. Նշվ. աշխ., էջ 153:

⁶² «Древнегреческо-русский словарь». Т. I-II, М., 1976, с. 310; И. X. Д в о р е ц к и й. Նշվ. աշխ., էջ 138:

⁶³ ՀԱԲ, հ. IV, էջ 102:

⁶⁴ Նույն տեղում, հ. IV, էջ 99, 102:

⁶⁵ Հայոց լեզվի պատմական քերականություն, II, էջ 89-90:

⁶⁶ ՀԲԸ, հ. III, էջ 118:

⁶⁷ ՀԲԸ, հ. IV, էջ 105:

պուկ-ուխ ' պ-պ < պ-կ *առնմանությամբ* և -ուխ *վերջածանցով* (*հմմտ.* մալ-ուխ «*փայտե կեռ, փայտե սեպ*», անան-ուխ, *որտեղ* * անան // նանա «*դադձի տեսակ*», գլ-ուխ, *որտեղ* -ուխ < *հ.-ե. *-kko*⁶⁸), *իսկ* պկկուն < * պուկ-ուն ' կ *բաղաձայնի կրկնությամբ* և -ուն *վերջածանցով* (*հմմտ.* եո-ուն, ծաղկ-ուն, սող-ուն, ցող-ուն *և այլն*): Պուկ *բառի նախնական նշանակությանը մոտ են նրա պոկ տարբերակի հետևյալ նշանակությունները.* «*ծիլ, գոխ, ընձյուղ*», «*սոխի և նման բույսերի ցողունը*»⁶⁹, «*սոխի ընձյուղ, խողովակաձև կանաչը*»⁷⁰: *Անվանակիր առարկաների սնամեջ լինելու հանգամանքը շեշտված են նաև հետևյալ բառերում.* պուք «*օրորոցի մեջ գետեղված աման, որի մեջ երեխան բնական կարիքը կատարում է*»⁷¹, պոկ (*Ագուլիսում*), պուկ (*Ջուդայում*), բուք (*Սվեդիայում*) «*օրորոցի մեջ հաստատված միզախողովակ*»⁷²:

*Այսպիսով, անկասկած է, որ «Գիլգամեշ» միջագետքյան դյուցազնավեպը ունեցել է ոչ միայն շումերական և սեմական-աքադական, այլև հնդեվրոպական-հայկական բաղադրատարր: Այսպիսի եզրակացությունը համահունչ է մ. թ. ա. V-III հազարամյակների հնագիտական նյութից բխող այն եզրակացության հետ, որը հաստատում է հնդեվրոպական էթնիկական տարրի առկայությունը այդ հազարամյակների Հայկական լեռնաշխարհում և Հյուսիսային Միջագետքում*⁷³: *Այս տեսանկյունից բացի, «Գիլգամեշը և խուլուպու ծառը» վիպերգը ուշադրության է արժանի նաև նրանով, որ կարևոր տեղեկություններ է պարունակում նաև բուսաշխարհի ու երաժշտական գործիքների պատմության վերաբերյալ:*

ИНДОЕВРОПЕЙСКО-АРМЯНСКИЙ КОМПОНЕНТ В ЭПИЧЕСКОЙ ПОЭМЕ «ГИЛЬГАМЕШ И ДЕРЕВО ХУЛУППУ»

САРГИС ПЕТРОСЯН

Р е з ю м е я

Анализ месопотамской эпической поэмы «Гильгамеш и дерево хулуппу» – неотделимой части эпического рассказа «Гильгамеш и Энкиду», показывает, что она состоит из трех компонентов с различными элементами. Наряду с шумерским и аккадским компонентами, там наличествует также индоевропейско-армянский компонент. Такое заключение ос-

⁶⁸ ՀԼ ՊՆԺ, էջ 232:

⁶⁹ ՀԱԲ, հ. IV, էջ 99, 102:

⁷⁰ ՀԲԲ, հ. IV, էջ 112:

⁷¹ Նույն տեղում, էջ 119:

⁷² ՀԱԲ, հ. IV, էջ 102:

⁷³ Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Նշվ. աշխ., հ. II, էջ 891-894:

новывается на фактах, наиболее яркими из которых являются следующие. 1) Имя дерева *huluppiya* (<**hul-uppi*) индоевропейско-армянского происхождения. Для *-uppi-* ср. арм. слова *nɪh* (<**nɪh-h*) "платан, осина, тополь (латин. *populus*)", а также *uɪh* "ладонь, горсть"/хетт. up "горсть, горстка". С точки зрения такой этимологии *huluppi* интересно как то обстоятельство, что дерево хулуппу росло "у чистого Евфрата" (т. е. на Армянском нагорье, где находятся истоки этой реки), а также сообщение Мовсеса Хоренаци о том, что в Армавире, в столице древней Армении, была священная роща платанов, шелест и направление движения листьев которых служили предметом гадания. Интересно и то, что лист платана имеет форму ладони, которая тоже служила предметом гадания. 2) Имена музыкальных инструментов *mikku* и *pukku/bukku* также индоевропейско-армянского происхождения. Для *mikku* ср. арм. слово *uɫɪh* (<**uɫɪh-uɪh*) "какой-то музыкальный инструмент", а для *pukku/bukku* ср. арм. слово *uɲɪɫ*, *uɲɪɲ* (<**uɲɪɫ-nɪ*) "свирель, дудка" (=др. греч. βυκάνη "витая труба, горн", латин. *būcina* "сигнальный горн"). Следовательно, индоевропейско-армянский компонент в эпическом рассказе "Гильгамеш и дерево хулуппу" представляет специальный интерес, особенно, в аспекте ботаники и истории музыкальных инструментов.

THE INDO-EUROPEAN-ARMENIAN COMPONENT IN THE EPIC TALE "GILGAMESH AND THE KHULUPPU-TREE"

SARGIS PETROSYAN

Summary

The analysis of the Mesopotamian epic tale "Gilgamesh and the Khuluppu-Tree"- indivisible part of the story of "Gilgamesh and Enkidu", shows that it is composed of different details from three components: Sumerian, Akkadian and Indo-European. This conclusion is based on a number of facts, among which the following ones are to be pointed out: 1) The botanical name *Huluppu* (<**hul-uppu*) is of Indo-European-Armenian origin. For *-uppu-* cf. Armenian word *nɪh* (<**nɪh-h*) "poplar", Latin. "populus" and *uɪh* "palm" (=Hittite up "handful"). 2) The names of musical instruments *Mikkû* and *Pukku/Bukku* are also of Indo-European-Armenian origin. For *Mikkû* cf. Armenian word *uɫɪh* (<**uɫɪh-uɪh*) "a musical instrument", for *Pukku/Bukku* cf. Armenian words *uɲɪɫ/uɲɪɫ*, *uɲɪɲ* (<**uɲɪɫ-nɪ*) "pipe" (cf. Greek βυκάνη, Latin. *būcina* "horn, trumpet, bugle"). Consequently, in many aspects the existence of Indo-European-Armenian component in the epic tale of "Gilgamesh and Khuluppu-Tree" is of special interest: for example in the aspect of the introduction of botanical terms and history of musical instruments.